Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են հայ ազգային զարթոնքի պատմական նախադրյալները և գրականության աշխարհականացման միտումները 19-րդ դարի 30-40-ական թվականներին:
2. Ո՞վ է Խաչատուր Աբովյանը, և ի՞նչ դեր ունեցավ նա հայ գրականության աշխարհականացման մեջ:
3. Ինչո՞ւ Աբովյանը իրավամբ համարվեց հայ նոր գրականության հիմնադիր:
4. Ժանրային առումով ի՞նչ նորություններ է բերել Աբովյանը գրականության մեջ: Գրական ի՞նչ ժանրերով է ստեղծագործել նա:
5. Կազմե՛ք սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը (խմբային աշխատանք):
6. Կարդա՛ ստորև զետեղված նյութը և տեղեկությունները զետեղիր համապատասխան գծակարգում (անհատական կամ խմբային աշխատանք):
   V - գիտեմ
   – - իմ իմացածին հակասում է
   + - նոր տեղեկություն է
   ! - հետքրքիր է, կարելի է քննարկել

V	-	+	!

7. Որո՞նք են «Վերք Հայաստանի...» վեպի ժանրային առանձնահատկությունները:
8. Ո՞րն է վեպի պատմական հիմքը: Ի՞նչ պատմական անձինք են գործում վեպում:
9. Ներկայացրո՛ւ «Հառաջաբան»-ի հիմնական գաղափարը: Որքանո՞վ են արդիական գրողի կողմից բարձրաձայնված թեմաները:
10. Մեկնաբանե՛ք՝ ինչ դերը ունի «Առաջաբանը» վեպում: Բացատրե՛ք «Հառաջաբանի» գեղագիտական դրույթները (խմբային աշխատանք):
11. Ներկայացրե՛ք «Վերք Հայաստանի...» վեպի կառուցվածքը, յուրաքանչյուրի համառոտ բովանդանդակությունը և նրանց ներքին կապը:
12. Վիպական պատմությունը կապե՛ք առաջաբանի դրույթների հետ: Գտե՛ք ընդհանրություններ և տարբերություններ:
13. Ձեր կարծիքով այս վեպը քանի՞ գաղափար է արտահայտում: Խմբով քննարկե՛ք, թե ինչու եք այդպես մտածում: Ձևակերպե՛ք գաղափարը ձեր բառերով:
14. Մեկնաբանի՛ր հեղինակի անձնական ապրումներն ու հայրենասիրական մղումների զուգակցումը վեպում: